*«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ*

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

## *ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ*

Հետազոտության թեման՝ Կրտսեր դպրոցականի իմացական հետաքրքրությունների ձևավորումը

Առարկան՝ Մայրենի, մաթեմ (դասվար)

Հետազոտող ուսուցիչ՝ Գաբրիելյան Նունե

Ուսումնական հաստատություն՝ Կաքավաձորի Մ.Մխիթարյանի անվանի միջնակարգ դպրոց

*Երևան 2023*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Ներածություն----------3**

**ԳԼՈՒԽ 1. Կրտսեր դպրոցականի իմացական հետաքրքրությունների ձևավորումը**

1.1.Հիմնահարցի վերաբերյալ հոգեբանական գրականության վերլուծություն---------- 4

1.2.Կրտսեր դպրոցական տարիքի ընդհանուր հոգեբանական բնութագիրը---------- 5

1.3. Կրտսեր դպրոցականի իմացական հետաքրքրությունների ձևավորումն ու զարգացումը

---------- 7

**ԳԼՈՒԽ 2. Փորձարարական աշխատանք----------14**

**Եզրակացություններ---------- 15**

**Գրականության ցանկ---------- 16**

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Թեմայի արդիականությունը**: Թեման արդիական է: Կրտսեր դպրոցականի տարիքն ուսումնական գործունեության ամենաակտիվ շրջանն է: Դա հատկապես այն տարիքն է, երբ երեխան անկեղծ է, հավատում է մեծերին, ընտանիքի անդամներին, հատկապես ուսուցչին, սկսում է զգալ: Եվ այդ բարոյական պատկերացումները դառնում են համոզմունք՝ այսինքն ձևավորվում է մարդու բարոյական և իմացական համոզմունքների և հետաքրքրությունների հիմքը:

Դպրոցական ուսումնառության պատրաստ լինել չի նշանակում միայն գրել-կարդալ, հաշվել իմանալ, այլ ընդգրկում է երեխայի անձի բոլոր կեղմերը՝ սկսած ֆիզիկակա զարգացումից մինչև հատուկ գիտելիքների և կարողությունների առկայությունը:

Առանձնացվում են դպրոցին պատրաստվածության հիմսախնդիրներր 4 խումբ՝ սոցիալական, ֆիզիոլոգիական, հուզակամային և իմացական:

Սոցիալական պատրաստվածությունը իր մեջ ներառում է երեխայի շփումը հասակակիցների հետ:

Ֆրզիկական ոլորտն ընդհանուր առողջությունն է:

Հուզակամային ոլորտը անմիջական ցանկությունները սեփական կամքին ենթարկելու կարոզությունն է:

Իմացական ոլորտն իր մեջ ներառում է հետևյալ գործընթացները՝ ուշադրություն, հիշողություն, երևակայություն, մտածողություն, ինչպես նաև ձեռքի մանր մոտորիկայի, կամ նրբաշարժումների զարգացածության աստիճանը:

**Թեմայի նպատակն է.**

● Ուսումնասիրել հոգեբան մանկավարժների փորձը, բացահայտել երեխաների մտավոր ընդունակությունների ձևավորման համար բարենպաստ պայմանները:

● Խթանել դպրոցականների ստեղծագործական մտածողության զարգացմանը, հմտությունների արդյունավետ ձևավորմանը կրտսեր դպրոցում:

**Հիմնահարց.** Հայկական կրթական հայեցակարգի արդիականության անհրաժեշտությունն է կապված դպրոցականների տարիքային առանձնահատկությունների և նտածողության զարգացման ընթացքում:

# ԳԼՈՒԽ 1. Կրտսեր դպրոցականի իմացական հետաքրքրությունների ձևավորումը

## 1.1.Հիմնահարցի վերաբերյալ հոգեբանական գրականության վերլուծություն

Կրտսեր դպրոցականների հոգեկան նոր որակները ծագում ու զարգանում են ուսումնական գործունեության ձևավորմանը զուգընթաց:

Երեխան ցանկանում է դուրս նայել փողոց,որտեղ աղավնիներ են թռչում, բայց պետք է լսել խնդրի լուծման նոր եղանակի բացատրությունը և լավ մտապահել մանրամասնությունները՝վաղվա ստուգողական աշխատանքը ճիշտ կատարելու համար: Այդպիսի պահանջներին մշտապես հետևելը, ըստ հանձնարարվող նմուշների սեփական վարքը կառավարելը նպաստում է երեխաների հոգեկան ֆունկցիաների հատուկ որակի՝ կամածինության զարգացման:

Ուսումնական տարբեր առարկաների գծով այս կամ այն հանձնարարությունները կատարելիս երեխաները որոնում են դրանց լուծման լավագույն ուղիները, ընտրում և համեմատում են գործողությունների տարբերակները, պլանավորում են դրանց կարգն ու իրագործման միջոցները: Իր գործողությունների որքան ավելի շատ քայլեր է կարողանում կանխատեսել երեխան և որքան ավելի մանրամասնորեն է կարողանում համադրել հնարավոր տարբերակները, այնքան մեծ հաջողությամբ է նա կարողանում վերահսկել խնդրի փաստական լուծման պրոցեսը:Ուսումնական գործունեության պրոցեսում վերահսկողության ու ինքնավերահսկողության անհրաժեշտությունը, ինչպես նաև մի շարք այլ առանձնահատկություններ, բարենպաստ պայմաններ են ստեղծում կրտսեր դպրոցականների մոտ գործողությունների պլանավորման և դրանք մեկուսի, այսինքն՝ ներհոգեկան ձևով կատարելու ընդունակության ձևավորման համար:

Ուսումնական գործունեության կարևոր պահանջներից մեկն այն է, որ երեխաները պետք է կարողանան ծավալուն կերպով հիմնավորել իրենց հայտնած մտքերի ու գործողությունների ճշտությունը:[1]

Այլ է վիճակը, երբ մենք գործ ունենք ժամանակակից կրտսեր դպրոցականի հետ: Ժամանակակից կյանքի դրվածքի, գրքերից, ամսագրերից,ռադիոից, հեռուստատեսությունից և չափահասներից ստացած տեղեկությունների շնորհիվ նա հաճախ չի համաձայնվում պատահական ու մակերեսային

[1] 1.Թորոսյան Կ.,Չիբուխչյան կ., Խաչատրյան Հ. 50 հարց ու պատասխան. Տարրական դասարանների ուսուցիչների համար, 134 էջ, §Զանգակ¦ , ºñ¨³Ý- 2013

բացատրությունների հետ: Նա այնպիսի բացատրություններ է պահանջում, որոնք համապասասխանում են շրջապատող իրականության մասին իր ունեցած պատկերացումների բավականին զարգացած համակարգին: Ժամանակակից յոթնամյա երեխան իրեն տրվող բացատրությունների նկատմամբ ավելի պահանջկոտ , քան նրա տարեկիցները նրա անցյալում:

Սովետական ու արտասահմանյան հոգեբանների և մանկավարժների փորձը համոզում է, որ ժամանակակից 7-10 տարեկան երեխաների նկատմամբ հաճախ կիրառելի չեն այն չափանիշները, որոնցով երեխայի մտածողությունը գնահատվում էր անցյալում:Նրանց մտավոր ընդունակություններն ավելի լայն ու հարուստ են, քան կարծում էին նախկինում:Փորձարարական հատուկ հիմարկներում հոգեբան – գիտնականները ուսումնասիրում են երեխաների մտավոր ընդունակությունները՝ ցանկանալով բացահայտել նրանց մտածողության ձևավորման համար բարենպաստ պայմանները:

Տարրական դպրոցի ներկայումս գործող ծրագրերը առաջին քայլն են հանդիսանում կրտսեր դպրոցականների իրական իմացական հնարավորությունների գործնական օգտագործման ուղղությամբ:

Կրտսեր դպրոցականներից շատերը սիրում են աշխատանքի ուսուցման դասերը, որոնց ժամանակ պետք է սրամտություն ու ճարպկություն հանդես բերել (օրինակ՝ նյութը կտրատելիս ու սոսնձով կպցնելիս),և որտեղ գործողության տեսակները հաջորդում են միմյանց:

Տեխնոլոգիայի դասերը ունեն մեկ ուրիշ էական հոգեբանական հետևանք ևս: Դրանց կազմակերպման պայմանները առավել նպաստավոր են երեխաների հոգեկանում առաջիկա աշխատանքը պլանավորելու և այն իրականացնելու ուղիներն ու միջոցները գտնելու կարողություն ձևավորելու համար:Աշխատանքի ուսուցման դասերին երեխան ինտենսիվորեն տիրապետում է իր գործողությունների հաջորդականությունը պլանավորելու և դրանց իրագործման համար անհրաժեշտ գործիքներ նախապատրաստելու կարողությունը:[2]

## 1.2.Կրտսեր դպրոցական տարիքի ընդհանուր հոգեբանական բնութագիրը

[2] 2.Кулагина. И. Ю. Возрастная психология. Москва, 1998, -175 ст.

4.Грэйс Крайг- Дон Бакум. Психология развития, Москва, 2007, - 939 ст.

5.Морозова Н.Г. Учителю о познавательном интересе / Н.Г. Морозова. М.: Знание, 2009

Բարոյական նորմերի և վարքի կանոնների յուրացումը:Երախայի բարոյական դաստիրակությունը սկսվում է դեռևս դպրոց ընդունվելուց շատ առաջ:Բայց միայն այստեղ է նա հանդիպում բարոյական պահանջների այնպիսի հստակ ու ծավալուն համակարգի, որոնց կատարումը մշտապես և նպատակասլաց կերպով վերահսկվում է: Կրտսեր դպրոցականներին ծանոթացնում են մեծաթիվ նորմաների ու վարքի կանոնների հետ: Սրանցով երեխաները պետք է ղեկավարվեն տարբեր իրադրություններում ուսուցիչների և այլ չափահասների հետ փոխհարաբերությունների մեջ մտնելիս, դասերի ընթացքում և ընդմիջումներին ընկերների հետ շփվելիս, հասարակական վայրերում և փողոցներում գտնվելիս: 7-8 տարեկան երեխաները հոգեբանական են այդ նորմաներն ու կանոնների իմաստը հասկանալու և դրանց ամենօրյա կիրառման համար:Բայց այդ նախապատրաստվածությունը հաճախ ուսուցչի և այլ չափահասների կողմից ժամանակին չի օգտագործվում: Ձևակերպելով երեխաներին ներկայացվող պահանջներն ու երբեմն երկար –բարակ <<ծամծմելով>> դրանք , դաստիրակները միշտ չէ որ հետևողականորեն ու խիստ կերպով ստուգում են իրենց ցուցումների կատարման ընթացքը:[3]

Համատեղ ուսումնական գործունեության ընթացքում երեխաների միջև փոխհարաբերություններ են հաստատվում:Դպրոց ընդունվելուց մի քանի շաբաթ անց առաջին դասարանցիներից շատերի մոտ չքանում են երկչոտությունն ու բազմաթիվ նոր տպավորությունների ազդեցության տակ առաջացած շփոթվածությունը: Նրանք սկսում են ուշադրությամբ հետևել նույն նստարանին նստող երեխայի վարքին, շփվում են այն համադասարանցիների հետ, որոնք համակրում են իրենց կամ որոնց հետ հետաքրքրությունների ընդհանրություն են ունենում:Նոր կոլեկտիվում կողմնորոշվելու առաջին շրջանում երեխաների որոշ մասը դրսևորում է իրենց բնավորության ոչ հատուկ գծեր: Բայց մյուս երեխաների հետ նորանոր փոխհարաբերությունների հաստատման հետ միասին դպրոցականներից յուրաքանչյուրը սկսում է հանդես բերել իր իսկական անհատական առանձնահատկությունները:

Կրտսեր դպրոցականների փոխհարաբերությունների ամենաբնորոշ գծերից մեկն այն է, որ նրանց բարեկամությունը, որպես կանոն հիմնվում է կյանքի արտաքին հանգամանքների և պատահական հետաքրքրությունների հիման վրա:Կրտսեր դպրոցականի գիտակցության զարգացման մակարդակը դեռևս այնպիսին չէ, որպեսզի նա հասակակցի կարծիքի վրա հենվելով

[3] Ա. Վ. Պետրովսկի <<Տարիքային մանկավարժական հոգեբանություն>>; 1974թ

կարողանա ճիշտ գնահատել ինքն իրեն: Ուսուցչի կարծիքը կրտսեր դպրոցականի համար առավել էականն ու անառակելին է:

Ուսումնական իրադրությունները բնորոշվում են մի շարք առանձնահատկություններով: Այստեղ, նախ, դպրոցականները յուրացնում են հասկացությունների հատկանիշները բացահայտելու և կոնկրետ գործնական խնդիրների որոշակի դասի լուծման ընդհանուր եղանակները: Երկրորդ առանձնահատկությունն այն է որ այդ եղանակների նմուշների վերարտադրությունը ուսումնական աշխատանքի հիմնական նպատակն է: Ուսումնական իրադրություններում կոնկրետ-գործնական խնդիրներ լուծելու ունակությունը այլ կերպ է յուրացվում: Ուսուցիչը կրտսեր դպրոցականին ամենից առաջ դնում է այնպիսի հանգամանքների մեջ, երբ անհրաժեշտ է որոնել կոնկրետ –գործնական խնդիրների լուծման ընդհանուր եղանակ: Այնուհետև, ուսուցչի ղեկավարությամբ, երեխաները գտնում ու ձևակերպում են այդ եղանակը: [4]

### 1.3.Կրտսեր դպրոցականի իմացական հետաքրքրությունների ձևավորումն ու զարգացումը

Կրտսեր դպրոցականներն ունեն իրեն տարիքին հատուկ մի քանի առանձնահատկությունները, որոնք նախադպրոցական տարիքի օրգանական շարունակությունն են: Առաջին հերթին այս տարիքի երեխաները շատ հետաքրքրասեր են: Նրանք գտում են ավելի շատ բան իմանալ բնական երևույթների, մարդկանց ու շրջապատող աշխարհի մասին: Այդ պատճառով էլ նրանք բազմաթիվ ու բազմապիսի հարցեր են տալիս ուսուցիչներին, ծնողներին ու ծանոթներին: Նրանց այս հատկությունը, եթե խելացի ուսուցչի կողմից ճիշտ ուղղություն ստանա, ապա կարող է դառնալ նրանց մտահորիզոնի և գիտելիքների ընդլայնման հոգեբանական հիմք: Կրտսեր դպրոցականների մյուս բնորոշ գիծը նրանց հուզական բարձր գրգռվածությունն է: Ուսուցչի հուզիչ խոսքը, վառ գույները, դիտած կինոնկարը, կարդացած հեքիաթը ամբողջությամբ գրավում, կլանում են երեխաներին: Սրան հակառակ երկար ու ձանձրալի խոսքային չոր շարադրանքը, խրատական քարոզները հոգնեցնում, շեղում է նրանց ուշադրությունը:

---

[4] 2.Кулагина. И. Ю. Возрастная психология. Москва, 1998, -175 ст.

4.Грэйс Крайг- Дон Бакум. Психология развития, Москва, 2007, - 939 ст.

5.Морозова Н.Г. Учителю о познавательном интересе / Н.Г. Морозова. М.: Знание, 2009

Կրտսեր տարիքի մյուս առանձնահատկությունները ընդօրինակումն է: Նրանք շատ են սիրում կրկնել ու վերարտադրել մեծերի շարժումները, վարքի ձևերը: Նրանց ընդօրինակման առաջին օբյեկտը ուսուցիչն է, որը նրանց համար դառնում է ամենաբարձր հեղինակությունը: ցավոք, երեխաները ընդօրինակում են նաև բացասական երևույթները, ուստի չափահասները պետք է խուսափեն բացասական վարքի ձևերից:[5]

Կրտսեր տարիքի մյուս բնորոշ գիծը կոլեկտիվիզմն է, համատեղ աշխատանքի մեջ ներգրավվելը: Նրանք ձգտում են ամեն ինչով աչքի ընկնել, արժանանալ հասակակիցների և ուսուցիչների գովասանքին: Ուսուցչի խրախուսանքից ավելի ակտիվ ու նախաձեռնող են դառնում: Սրան հակառակ, ընկերներից ետ մնալը, պարսավանքի արժանանալը, նրանց մեջ առաջացնում է բացասական հուզական վիճակներ, հոգեկան ակտիվության անկում: Համատեղ ուսումնական աշխատանքն ու խաղը երեխաների մեջ դաստիարակում է բարոյական այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են աշխատասիրությունը, ընկերասիրությունը, հոգատարությունը, կամային վճռականությունը և պարտքի զգացումը:

Կրտսեր դպրոցականների ստեղծագործական մտածողությունը, ըստ հոգեբանների հետազոտությունների, պետք է սկսել ձևավորել կրտսեր դպրոցական տարիքից: Կրտսեր աշակերտների կողմից էվրիստիկական ձևերի յուրացումը ոչ ստանդարտ խնդիրների լուծման ընթացքում նպատակահարմար է կապել որոշակի առարկաների դասավանդման տեխնոլոգիաների, մասնավորապես, ինֆորմատիկայի ներածական կուրսի հետ, որը նպաստում է մտավոր կարողությունների զարգացմանը և աշակերտների կրթական հետաքրքրությունների ձևավորմանը: Վերլուծելով առկա ուսումնական ծրագրերը և դասագրքերը՝ եկել ենք այն եզրակացության, որ ստեղծագործական մտածողության հմտությունները ձևավորող, մասնավորապես էվրիստիկական առաջադրանքներ լուծելու կարողության խնդիրն անբավարար է մշակված:

Փիլիսոփայական հանրագիտարանում էվրիստիկական գիտաբառը բնորոշվում է որպես գյուտի արվեստ, մի ուղեցույց, թե ինչպես մեթոդական միջոցի օգնությամբ գտնել նորը: Էվրիստիկական խնդիրն առաջադրանք է, որի լուծման եղանակը հայտնի չէ սուբյեկտին, կամ խնդիր է, որը առաջացնում է երեխայի մոտ ճանաչողական և ստեղծագործական ակտիվություն: Երբ

[5] Р. С. Немов, “Психология” книга 2, 1995г

քննարկում են Էվրիստիկական խնդիր, ի հայտ է գալիս անհրաժեշտություն որոնելու խնդրի լուծման գործունեության կազմակերպման նոր ձևեր եւ մեթոդներ:

Դիտարկենք տարբեր տեսանկյուններից անձի հնարավորությունները լուծելու ստեղծագործական, այդ թվում՝ էվրիստիկական, ոչ ստանդարտ առաջադրանքներ: Որոշ հետազոտողներ կարծում են, որ ստեղծագործական ունակությունը ընդհանուր մտավոր ընդունակությանո մի բաղադրիչ մաս է (Ռ. Ստերնբերգ, Դ. Վեքսլեր, Ջ. Տերմեն, Ռ. Վայսբերգ): Գիտնականների մի մասը գտնում է, որ շարժառիթները, արժեքները, անհատականության գծերը մեծ դեր են խաղում ստեղծագործական պահվածքի դետերմինացիայում (Ա. Մասլոու, Դ. Վ. Մակկիոն, Է. Ֆրոմմ, Ա. Օլոխ, Ա. Տաննենբաում): Գիտնականների մյուս մասը համարում է, որ ստեղծագործական ունակությունը համարվում է անկախ գործոն և անկախ է ինտելեկտից (Գ. Գրուբեր, Դ. Գիլֆորդ, Կ. Թեյլոր): Կան նաև սինթետիկ հասկացությունների կողմակիցներ (Դ. Բ. Բոգոյավլենսկայա, Ա. Մ. Մատյուշկին, Ջ. Ռենզուլլի, Յա. Ա. Պոնոմարյով, Ա. Ն. Լուկ, Ռ. Ստենբերգ, Ջ. Ֆելդխյուզեն, Ա. Տաննենբաում): Յուրաքանչյուր մոտեցումն ունի իր յուրահատկությունը: Ներկայումս իրականացվում են ստեղծագործական ունակությունների զարգացման խնդրի հետագա ուսումնասիրություններ, մշակվում են անհատի ստեղծագործական կարողությունների զարգացման գործընթացի տեսական հիմքերն ու մանկավարժական գործոնները (Վ. Վ. Բոգոսլովսկի, Ն. Ա. Մալինիկովա, Ի. Գ. Պչելինցևա, Ա. Ա. Ստեպանով), սկզբունքներն ու օրենքները (Գ. Ս. Ալտշուլլեր Վ. Ի. Անդրեև, Ի. Պ. Վոլկով): [6]

Արտասահմանյան հոգեբանական և ուսումնական գրականության մեջ կան աշխատանքներ, որոնք ունեն գործնական արժեք ստեղծագործական ունակությունների զարգացման և նոր գաղափարների որոնման հմտությունների ուսուցման գործընթացում: Սրանք խնդրահարույց և հետազոտական ուսուցման մոդելներ են (Դ. Ջոյս, Ա. Ֆենթոն), ստեղծագործական ունակությունների զարգացման մոդել (Գ. Ս. Ալտշուլլեր), ստեղծագործական ունակությունների զարգացման ծրագրեր (Ա. Անդերսոն, Վ. Ա. Սլաստյոնին, Է. Դե Բոնո, Գ. Սմիթ, Ռ. Հաես), ստեղծագործական ունակություններ զարգացնող տեխնոլոգիաներ (Ի. Պ. Վոլկով, Ի. Պ. Իվանով), էվրիստիկ ուսուցման համակարգ (Մ. Ա. Պլաքսին, Ա. Վ. Խուտորսկի և այլն):

[6] 2.Кулагина. И. Ю. Возрастная психология. Москва, 1998, -175 ст.

Էվրիստիկական խնդիրների լուծման ընթացքը տալիս է ստեղծագործական ունակությունների և հմտությունների ձևավորման հնարավորություններ, այդ ընթացքում որոշակի դժվարություններ են ի հայտ գալիս կրթական գործունեության մեջ ընդհանուր տեսական գաղափարների իրականացման ժամանակ: Մշակված մոդելների, ծրագրերի, տեխնոլոգիաների, համակարգերի ներդրումը բարդացվում է կա՛մ դրանց գլոբալացումով, կա՛մ նոր տեսակի ուսումնառության յուրահատուկությամբ՝ նշվում է Գ. Ս. Ալտշուլլերի և նրա հետևորդների կողմից (Մ. Ֆ. Զարիպով, Բ. Լ. Զլոտին, Վ. Ա. Կամաև, Գ. Ի. Իվանով, Ս. Ս. Լիտվին, Վ. Մ. Ռադոմսկի, Լ. Ի. Շրագինա): Անհատի ստեղծագործական կարողությունների զարգացումը իրականացվել է ուսուցման գործընթացում ոչ միայն ուսանողների, մեծահասակների, այլև ավագ դպրոցի սաների հետ: Սակայն գյուտարարական խնդիրների լուծման տեսությունը (ԳԽԼՏ) ենթադրում է ֆիզիկայի, քիմիայի, գծագրության դասընթացների բավարար իմացություն, ինչը դժվարացնում է դրա օգտագործումը կրտսեր դպրոցում: Փորձ է արվել իրականացնել այս տեխնոլոգիան միջին և կրտսեր դպրոցների սաների համար արդիականացված տարբերակի տեսքով (Ս. Ի. Գին, Մ. Ի. Մեերովիչ, Մ. Ա. Պլաքսին, Լ. Ի. Շրագինա, Յու. Գ. Տամբերգ): Օրինակ՝ նախնական համակարգչային գրագիտություն «Պերմի տարբերակը» (Մ. Ա. Պլաքսին) որպես հիմք վերցրել է գյուտարարական խնդիրների լուծման տեսությունը (ԳԽԼՏ): Դրա մեջ օգտագործվում են այնպիսի տեխնոլոգիաներ, ինչպիսիք են ձևաբանական վերլուծության մեթոդը, «փոքր մարդուկների մեթոդը» տեխնիկական խնդիրների լուծման մեթոդներից մեկը, որն օգտագործվու է մոդելավորման համար: Սակայն այս դասընթացն ունի ամբողջական կառուցվածք և բովանդակություն, որը հիմնականում ուղղված է տեխնիկական խնդիրների լուծմանը, որոնք կապված են ֆիզիկական գործընթացների յուրացման հետ, որը չի ներառում ներդնել տարրական դպրոցի ինֆորմատիկայի այլ այլընտրանքային ծրագրերում:

Գյուտարարական խնդիրների լուծման տեսությունը (ԳԽԼՏ) հարմար և հասկանալի ներկայացված է կրտսեր աշակերտների համար նախատեսված Զ. Գ. Շուստերմանի «Բոքոնիկի նոր արկածները կամ մտածելու գիտությունը մեծահասակների ու փոքրահասակների համար» գրքում, բայց դա ոչ դասագիրք է, ոչ էլ մեթոդական ուղեցույց ուսուցիչների համար, քանի որ նախատեսված է ծնողների և երեխաների համատեղ ընթերցանության համար:

Էվրիստիկական կրթության ոլորտում հայտնի են Ա. Վ. Խուտորսկոյի գիտական հետազոտական ուսումնասիրությունները: Հրատարակվել են մեթոդական ուղեցույցներ ուսուցիչների համար, ինչպես նաև սկսել են հրատարակել համակարգչային գրագիտության

աշխատանքային տետրեր կրտսեր դպրոցի աշակերտների համար, սակայն Ա. Վ. Խուտորսկոյի առաջարկած համակարգը հիմնականում օգտագործվում է բոլոր տարիքի երեխաների համար Էվրիստիկական օլիմպիադաների նախապատրաստման և անցկացման ժամանակ:

Իհարկե, ոչ ստանդարտ, Էվրիստիկական մտածելակերպի ձևավորմամբ զբաղվում են հոգեբանները: Այնուամենայնիվ, հոգեբանի աշխատանքը դպրոցում անցնում է ուսուցմանը զուգահեռ, բայց չի ինտեգրվում ուսուցման գործընթացում: Օրինակ՝ Է. Դե Բոնո մշակել է հատուկ հոգեբանական դասընթաց «ընդլայնված մտածելակերպի» զարգացման ուղղությամբ, սակայն այս դասընթացը նախատեսված է ուսանողների համար և ինքնուրույն առարկա է, որը կապված չէ այլ առարկաների դասավանդման հետ:

Գոյություն ունեն տարբեր տեսակետներ այն պայմանների մասին, որոնք նպաստում են ստեղծագործման գործընթացին: Գիտնականները ստեղծում են այնպիսի պայմաններ, որոնք նպաստում են ստեղծագործական անձի ոգեշնչման (Ա. Մասլոու), պայմաններ որոնք հիմված են օբյեկտի կամ երևույթի խոր ուսումնասիրության կազմակերպման վրա (Վ. Ի. Վերնադսկի): Ստեղծում են ուղեցույցներ ուսուցման ընթացքում ստեղծագործական միջավայր ստեղծելու համար, որն էլ նպաստում է առանձին ստեղծագործական ունակությունների զարգացմանը և կիրառմանը (Մ. Վ. Կլարին):

Այսպիսով՝ հայկական կրթական հայեցակարգի արդիականացման անհրաժեշտությունը, կապված ստեղծագործական մտածողության զարգացման դպրոցականների ուսուցման մեթոդների ոչ բավարար մշակվածության հետ ուղղված էվրիստիկական խնդիրների լուծմանը, որը նպաստում է դպրոցականի ստեղծագործական ունակությունների զարգացմանը, դարձավ հիմք այս ուսումնասիրության համար:

Հայտնաբերված հակասությունները բացահայտեցին ուսումնասիրության արդիականությունը, թույլ տվեցին ձևակերպել գիտական խնդիր, որի լուծման համար անհրաժեշտ է՝

- մշակել մեթոդական համակարգ դպրոցականների ուսուցման համար, որը կձևավորի էվրիստիկական խնդիրների լուծման հմտությունները համակարգչային գրագիտության և ՏՀՏ–ի նախապատրաստական դասընթացների ընթացքում.
- դպրոցականների ստեղծագործական մտածողության զարգացման տեխնոլոգիաների թեստավորումը, որը կխթանի էվրիստիկական խնդիրների լուծման հմտությունների արդյունավետության ձևավորմանը համակարգչային

գրագիտության և ՏՀՏ–ի նախապատրաստական դասընթացների ընթացքում ցածր դասարաններում:

Այս խնդրի տեսական և գործնական նշանակությունը և դրա անբավարար մշակվածությունը մանկավարժական և հոգեբանական գրականության մեջ հիմք է դարձել հետազոտություն անցկացնելու համար:

«Առաջին քայլերը ինֆորմատիկայի աշխարհում» դասընթացը Ս. Ն. Տուր, Տ. Պ. Բոկուչավա ներառում է մեթոդական ուղեցույց՝ մանրամասն դասերի համառոտագրեր ուսուցչի համար, տպագիր հիմքով տետրեր աշակերտի համար և տետրեր ստուգողական աշխատանքների համար: Աշխատանքային տետրերում հանձնարարությունները կենտրոնացած են բացառապես գրաֆիկական պատկերների վրա, որը նշանակում է, որ դրանք կարելի է օգտագործել առաջին դասարանում և նախակրթարանում: Դասընթացներում շատ հետաքրքիր են ժամանցային ծրագրերը՝ նախատեսված յուրաքանչյուր դասի համար, դրանց մի մասը կարելի է օգտագործել միջին դպրոցի համար:[7]

Անցած նյութն ամրագրվում է երեխաների կողմից համակարգչի վրա նկարների տեսքով: Նոր գիտաբառերը, որոնք սովորել են դասարանում, ներկայացվում են տպատառերով: Երբեմն երեխաները անվանագրում են իրենց նկարները՝ հորինելով դրանց համար նոր անուններ: Այս աշխատանքի ընթացքում ակտիվանում է երեխայի պատկերային ընկալումը: Օրինակ՝ նա նկարում է իր սիրելի ճաշատեսակները, որոնք ընդգրկված են ճաշացանկերում, և կողքին՝ համակարգչի վրա, նկարում է ուրիշ ճաշացանկ: Այսպիսով՝ օգտագործվում է զգացմունքներ, որոնք արթնացնում են նրա երևակայությունը և տալիս են երեխային ստեղծագործելու հնարավորություն:

Այս ձևը նույնպես թույլ է տալիս յուրաքանչյուր երեխային աշխատել իրեն բնորոշող արագությամբ, որը համապատասխանում է անհատի ընկալման սեփական արագությանը:

Նրանք փոխում են պատմվածքների սյուժետային ուղղվածությունը, որոշ պատկերներ կրճատում, մյուսները՝ընդարձակում: Հատկանշականն այն է, որ երեխաների երևակայությունը ուղեկցվում է բարձր հուզականությամբ, հատկապես նկարելիս, գույների ընտրություն կախված է նրանց տրամադրությունից ու հոգեվիճակից: Երևակայական մտապտկերները դառնում են երեխաների ստեղծագործական ընդունակությունների հոգեբանական հիմքը:

[7] 5.Морозова Н.Г. Учителю о познавательном интересе / Н.Г. Морозова. М.: Знание, 2009

Ուսումնական իրադրությունների բովանդակությունը և ձևը որոշվում են մանկավարժական հոգեբանության, դիդակտիկայի  և մասնավոր մեթոդիկաների համատեղ միջոցներով:

## ԳԼՈՒԽ 2. Փորձարարական աշխատանք

Նպատակն է բացահայտել կրտսեր դպրոցականների իմացական հետաքրքրությունների ձևավորումն ու զարգացումը:

Մասնակցեց 10 երեխա, որոնցից 6 աղջիկ են, 4 տղա: Ես խաղի միջոցով, օգտագործելով զրույցի մեթոդը կարողացա հասկանալ նրանց իմացական հետաքրքրությունների զարգացման մակարդակը:

| | Անուն, ազգանուն | Տարիք | իմացական հետաքրքրությունների զարգացման աստիճանը |
|---|---|---|---|
| 1. | Ա. Ս. | 9 | Շուտ է ընբռնում հարցերը |
| 2. | Լ. Ե. | 9 | Կարողանում է արագ մտածել |
| 3. | Մ. Դ. | 9 | Ուժեղ տրամաբանում է |
| 4. | Ս. Դ. | 9 | Թույլ է զարգացած իմացական հետաքրքությունը |
| 5. | Է. Մ. | 9 | Գերազանց մտածողություն ունի |
| 6. | Դ. Կ. | 9 | Միջին զարգացվածություն |
| 7. | Գ. Ս. | 9 | Եվ հարցերն է հիշում լավ և կարողանում է արագ պատասխանել հարցերին |
| 8. | Ա. Մ. | 9 | Դանդաղ է մտածում |
| 9. | Ա. Դ. | 9 | Արագ պատասխանում է բոլոր հարցերին, առանց մոռանալու նախորդները |
| 10. | Յ. Գ. | 9 | Վստահ և գիտակ պատասխանում է տրված հարցերին |

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գնահատման բնույթից է կախված ուսումնական աշխատանքի կազմակերպումը: Եթե գնահատականը դրական է, ապա այդ նշանակում է, որ տվյալ ուսումնական իրադրությունը սպառել էիրեն ու կարելի է անցնել նոր նյութի յուրացման, և ընդհակառակը:

Ուսումնական գործունեության պրոցեսում վերահսկողության ու ինքնավերահսկողության անհրաժեշտությունը, ինչպես նաև մի շարք այլ առանձնահատկություններ, բարենպաստ պայմաններ են ստեղծում կրտսեր դպրոցականների մոտ գործողությունների պլանավորման և դրանք մեկուսի, այսինքն՝ ներհոգեկան ձևով կատարելու ընդունակության ձևավորման համար:

Ուսումնական գործունեության կարևոր պահանջներից մեկն այն է, որ երեխաները պետք է կարողանան ծավալուն կերպով հիմնավորել իրենց հայտնած մտքերի ու գործողությունների ճշտությունը:

Կրտսեր դպրոցական շրջանի՝ 6-7-10 տարեկան երեխան դպրոցում ընդգրկվում է պատասխանատու հարաբերությունների համակարգ, որը նրան ուղղորդում է ամբողջ կյանքի ընթացքում: Երեխայի դպրոցի և ուսման, ուսուցչի և ինքն իր նկատմամբ հարաբերություններում արտահայտվող անհատական պատրաստվածությունը ենթադրում է երեխայի գործունեության և վարքի սոցիալական դրդապատճառներով հայտնի զարգացման մակարդակ, որը որոշում է աշակերտի ներքին դիրքը:

Եվ այսպես շարունակ՝ մինչ ծերություն և մահ: Չնայած վերը նշված տվյալ շրջանին բնորոշ չափանիշների՝ շատ հաճախ տեղի են ունենում տվյալ փուլին բնորոշ, սակայն սահմաններից դուրս ընթացող շեղումներ, որոնցից էլ հետևում է մի շարք հեղինակների կողմից տարիքային ստորաբաժանման տարբեր դասակարգումը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Թորոսյան Կ.,Չիբուխչյան կ., Խաչատրյան Հ. 50 հարց ու պատասխան. Տարրական դասարանների ուսուցիչների համար, 134 էջ, §Զանգակ¦ , ºñ¨³Ý- 2013
2. Кулагина. И. Ю. Возрастная психология. Москва, 1998, -175 ст.
3. Грэйс Крайг- Дон Бакум. Психология развития, Москва, 2007, - 939 ст.
4. Морозова Н.Г. Учителю о познавательном интересе / Н.Г. Морозова. М.: Знание, 2009